Բ. ՏԱՐԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 30 ՅՈՒՆԻՍ 1899 Թ. 41

ՇԱՐԺՈՒՄ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Պուլկարիոյ համար
Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 »
Օտարաշխարհի համար Տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »
Ամերիկայի համար
Տարեկան 2.50 տլր.
Վեցամսեայ 1.25 »
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ
Յանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ է. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքէն աւելի անգամներու համար 20 0|0 զեղչ կըլլայ։

Նամակ, դրամ ղրկել Խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ «Шаржумъ» Варна.

Rédaction du journal «Charjoum» Varna (Bulgarie)

Գրութիւնք ետ չեն տրուիր

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Յ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

R. P. Kalemkarian Mechitharistengasse W. 4 Vienne (Autriche)

ԱԶԴ

—

Պուլկարական Գիմնազիոնի ուսուցիչ մը, կուզէ պուլկարերէնի մասնաւոր դասեր աւանդել նոյնպէս և ուրիշ առարկաներ, գիտէ և ֆրանսերէն։

Հարցնել, «Շարժում»ի խմբագրատունը.

ՄԵՐ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԲՈՒԼԿԱՐԻԱՅՈՒՄ

—

Ուսումնական տարին լրացաւ. Բուլգարիայի հայկական դպրոցներում հարցաքննութիւնները արդէն վերջացել են կամ վերջանալու վրա են։

Մանուկները և ուսուցիչները երկու ամիս հանգստանալուց յետոյ՝ նորից պէտք է դիմեն աշխատութեան։ Նրանք էլ մտածելու բան չունին. գուցէ միայն ուսուցիչները, որոնց դեռ յայտնի չէ—արդեօ՞ք նորից պէտք է շարունակեն իրանց պաշտօնավարութիւնը նոյն դպրոցներում, թէ ստիպված պէտք է լինեն թափառել նոր պաշտօն գտնելու համար։

Պէտք է ասել որ այս տարի առհասարակ կրթական գործը աւելի լաւ վիճակում էր Բուլգարիայում, գոնէ մեր այցելած ուսումնարանների մէջ—Վառնա, Շումլա, Սլիվէն, բարեխիղճ երիտասարդ և ժամանակի պահանջները որոշ չափով ըմբռնող ուսուցիչները նախկին սպանդանոցները դպրոցների էին վերածել։ Լսելով գիտենք որ վատ չեն և Ֆիլիպպէի ու Դոբրիչի ուսումնարանները, որովհետեւ դրանց ղեկը գտնվում էր նոյնպէս երիտասարդ, միջնակարգ կանոնաւոր կրթութիւն ստացած մարդկանց ձեռքում։

Կաղում էին միայն Ռուսչուքի, Ֆիլիպէի, Բուրկասի և Սոֆիայի դպրոցները։

Այս բոլորը վերաբերում է դպրոցի մտաւոր յառաջադիմութեան, և այդ է միակ մխիթարականը։ Եւ զարմանալի է որ այդքան էլ արդիւնք տւին այդ դպրոցները։ Որովհետեւ ամեն տեղ նիւթապէս դրեթէ բոլոր դպրոցներն էլ անապահով են. ուսուցիչները կանոնաւոր ռոճիկ չեն ստացել. ուսումնական զանազան անհրաժեշտ գործիքներ և պիտոյքներ միշտ պակաս են եղել, կամ բոլորովին չեն եղել։ Այս պայմանութիւնը անշուշտ ազդել է թէ ուսուցիչների և թէ աշակերտների վրա։

Այսօր ուսուցիչները և աշակերտները ժամանակաբար հանգստի դիմելով՝ դպրոցները նոյն նիւթական վիճակում են թողնում, առանց յոյս ունենալու որ միւս տարի աւելի բախտաւոր կը լինեն։

Ուսուցիչները ոչ միջոց և միջոց ունեն դպրոցների նիւթականը բարելաւելու, ապահովելու։ Այդ գործը մնում է տեղական հայ համայնքութիւններին և դպրոցական հոգաբարձուներին։

Հայ համայնքութիւնները պէտք է համոզված լինեն որ ռոճիկները կանոնաւոր կերպով չի ստացող, պարտքով ապրող, նիւթապէս տանջվող ուսուցիչները որչափ էլ բարի, ազնիւ և իրանց կոչմանը նուիրված մարդիկ լինեն, այնուամենայնիւ պէտք է ենթարկվին նիւթական պակասութեան ճնշմանը։ Իսկ այդ պարագան շատ կազդէ մանկավարժների հոգու և մարմնի վրա. նրանց ուղեղը մասամբ պէտք է զբաղված լինի այս հարցերով, արդեօ՞ք նորէն պարտքով պէտք է կարողանամ ճաշել, թէ այսօր պէտք է մեռնեմ։

Մանկավարժութիւնը ամենածանր և ամենափափուկ պաշտօնն է, և այդ պաշտօնը վարողը միշտ պէտք է ապահով լինի իր ապրուստի մասին։

Դպրոցները բոլորովին զուրկ են գիտական ամենապարզ գործիքներից և նկարներից. այդպիսի պարագայում բնական և այլ գիտութիւնները աւանդող ուսուցիչը ստիպված է լինում իր ուղեղից միջոցներ հնարել աշակերտին հասկացնելու իր աւանդած գիտական ճշմարտութիւնները։ Նոյնիսկ աշխարհագրական փոքր ի շատէ կանոնաւոր քարտէսները բացակայ են. շատ տեղերում անկանոնը նոյնիսկ չը կայ։

Այս բոլորը պարզելուց յետոյ՝ մենք առաջարկում ենք Բուլգարական բոլոր հայաբնակ քաղաքների հայութեանը, որ հէնց հիմակւանից աշխատեն իրանց դպրոցները հնար եղածի չափ ապահովել, գոնէ եկող ուսումնական տարւայ համար։

Այդ պարտականութիւնը աւելի ընկնում է երկսեռ երիտասարդութեան վրայ, որը աւելի լաւ է ըմբռնում կրթութեան և իսկական լուսաւորութեան փրկարար ազդեցութիւնը։

Բացի նիւթապէս ապահովելուց, հիմակւանից պէտք է՞ ճիգ թափել անպէտք, տգէտ և անբարոյական ուսուցիչներից դպրոցները ազատել և նրանց տեղը աւելի արժանաւորներին հրաւիրել։

Ամօթ է մեզ համար։ Բուլգարական ազատ երկիրը մեզ թոյլատրում է ազատ կերպով մշակել մեր նոր սերնդի միտքն ու հոգին։ Եւ մենք յիմարաբար չը կորցնենք մեր թանգ ժամանակը։

ՎԱՐԴՕ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԵՐՈՍՆԵՐ

—

Ահա անցեալ շաբաթ գիշերուան ներկայացումի նիւթը։

Մեր միտքը չէ խօսիլ պիէսին գրական արժանիքներուն և պակասութիւններուն մասին։ Պիէսը կատարելագործուելու, ուղղուելու շատ պէտք ունի։ Ուստի կառաջարկենք Պ. Գալէմճեանին իր այդ աշխատութիւնը սրբագրէ գրականութենէ հասկցող, ճաշակով և մեր լեզուի ճկուն դարձուածներուն ծանօթ մէկու մը օժանդակութեամբ։ Այն ժամանակ համոզուած ենք որ այդ թատերական գրուածքը կը դառնայ մեր բեմին զարդը իր հարուստ, ժամանակակից նիւթովը ու բարոյական ազդեցութեամբը։

* * *

Պիէսին հոգին կը կազմեն, Պետօ, հրոսախմբի պետը, անոր ընկերը Բաչօ, մայրը, դաւաճան Կոմիտաս քահանան, Ջալլատ Շէյխը և Շաքիր փաշան—Հայաստանի բարենորոգիչը, որ իր բարենորոգումները կոտորածներով սկսաւ։

Պետօ և իր ընկերներ անձնազոհ յեղափոխականներ են. Վասպուրականի երիտասարդութեան ծաղիկը, դերի հայրենիքի ազատութեան ամենահաւատարիմ և վրէժխնդիր զինուորները։ Կոմիտաս քահանան հայ կղերի սոսկալի, դրամի համար ամէն սրբութիւն ոտքի տակ տուող ամենավատ ներկայացուցիչներուն կատարելատիպն է, որ և պիէսին ամենայաջողուած տիպը կարելի է համարել։ Շէյխ Ջալլատ, համիտականների հրամանատարը, հայժողովուրդը թալնող աւազակը, որուն ամէն յանցանքը կը թաղուի Սուլթանին ղրկած բարենորոգիչին կաշառք տուած ոսկիներու կոյտերուն տակ։ Վերջապէս ինքը՝ Շաքիր փաշան, որ կաշառակեր Թուրք Սուլթանին հաւատարիմ ստրուկ, հայու ջնջումը փափաքող պաշտօնեաներէն է։ Կը պակսի միայն հայ Թրքամոլ վաչխառուն. և այն ժամանակ ահա մեր առջեւ կը ներկայանար մեր երկիրը աւերող, վաճառող, զմեզ կոտորող և ճզմող տարրերուն ամբողջ գումարը, որ իր բիրտ ուժով, կեղծութեամբ և դաւադրութիւններով կը ճգնի ոչնչացնել մեր յեղափոխական հերոսները, որոնք ամէն ինչ թողած, ամէն բան մոռցած կատաղի կռիւ կը մղեն մեր երկիրը ու ժողովուրդը ազատելու այդ վագր աղուէսներու ճիրաններէն։

* * *

Կռիւը կատաղի է և անհաւասար։ Մէկ կողմէն կանգնած է Թուրք կառավարութեան զօրապետը իր զօրքերով, որուն կօժանդակէ քիրտ արիւնռուշտ և աւազակ շէյխը իր ցեղով և ազգակիցներով. ու, աւելի սոսկալին, հայ քահանան իր դիւային խոր-

հուրդներով և ծրագիրներով։ Այս վատութեան, գազանութեան և բիրտ ուժին դէմ կանգնած են անկեղծ, անձնուէր, միայն սրբազան գաղափարին և գերի Հայրենիքին Նուիրուած սակաւաթիւ հայ երիտասարդները։ Ու կը կռուին։ Ինչպէս ըսինք կռիւը կատաղի և անհաւասար է։ Չարը, վատը, բիրտ ուժը յաղթող կը հանդիսանայ. մաքուրը, բարձրը և ազնիւը կը խորտակուի կը մեռնի. սակայն համոզուած ըլլալով որ վերջ ի վերջոյ յաղթութիւնը իւրայիններունը պիտի ըլլայ։ Գերին պիտի ազատուի, բռնակալը պիտի տապալի...։

* * *

Բնական էր որ այս տեսակ բովանդակութիւն ունեցող բիէս մը յաջողութիւն պիտի գտնէր բեմին վրայ. չէ որ հոն պատկերացած են ժողովրդի էն ատելի եւ արիւնարբու թշնամիները իրենց բոլոր զզուելի կողմերով։

Իսկ ասոնց դիմացը հայրենիքի մարմնացած վրէժխնդրութեան կարիճ հայ երիտասարդներն են, որ ամենայն կատաղութեամբ կռիւ կը մղեն իրենցմէ հազարաւոր անգամներ զօրեղ թշնամիին դէմ և շատ անգամ ալ անոնցմէ կապանեն։

* * *

Թատրոնը գրեթէ լեցուն էր. հարուստ համարուած դասակարգը բացակայ էր։ Բայց ինչ փոյթ։ Հոն էր ժողովուրդը. այն ժողովուրդը, որ ամէն տեղ կը տանջուի, ամէն տեղ յուսահատութեան գիրկը իյնալու սրամադրուած՝ ոգեւորողի քաջալերողի պէտքը կզգայ։ Եւ նա ոգեւորուեցաւ. մխիթարուեցաւ գոնէ վայրկեանապէս Թատրոնին սրահին մէջ։ Բայց անշուշտ դուրս գալէն վերջն ալ մտածեց այս, զինք միայն զէնքը կրնայ փրկել այս անտանելի վիճակէն։

ՀԻՒԼԷ

——)·(——

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԵՌԱԳԻՐ

—

Մեր Աղեքսանդրիաի մասնաւոր թղթակցէն։

Աղեքսանդրիա, 28/10 Յունիս

Երէկ խուռն բազմութեան պահանջումով Օրմանեան չը յիշատակուեցաւ։

ԿԱՐԻՃ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Տիգրանակերտ, 15 Մայիս

Ի՞նչ ընենք, ո՞ւր երթանք եւ որո՞ւ դիմենք։ Մեր աղիողորմ ձայնը լսող չկայ։ Մեր վիճակը շատ անտանելի է, հալածանքն ու տառապանքն օրէ օր կը սաստկանան։ Ամէն օր ձերբակալութիւններ եւ խուզարկութիւններ. տասնեակներով կը բանտարկուին. մեր երկիրը դժոխք մը դարձեր է։ Օրերը նօթի եւ ծարաւ կանցունենք. չոր հացի կտորի համար կսկսինք իրարու վրայ յարձակիլ։

Վեհափառ Սուլթանի հրամանաւը տեղական պարիսպները կը քանդեն, դրամ չունին, քարերը կը ծախեն։

Թուրք պաշտօնեաներուն ամսաթօշակները չվճարուիր. եւ այդ հրէշները անօթի առիւծ կտրած հայու կոկորդին ընկած կը զարնեն, կապանեն, կը հալածեն եւ կը տանին. հայը բան չունի... Անօթի ծարաւ կը մեռնի։

Օրերս ցորենի գինը իջաւ 300 ղրուշի. քիչ մը շունչ պիտի առնէինք յանկարծ նոր կոտորած մը պատրաստելու գրգռում մը սկսաւ։ Տեղական կառավարութիւնը միջոցներ ձեռք առաւ եւ հանդարտեցուց. առանց վնասի անցաւ, միայն քանի մը հայեր ձերբակալուեցան, իբր թէ խռովութիւններուն պատճառ հայեր էին։

Արտասահմանէն եկած նամակները կը բացուին. նամակներու եւ պատկերներու պատճառաւ յառաջ կուգան ձերբակալութիւններ։ Հայը բոյն, բնակութիւն չունի. մի միայն չորցած հոգի մը ունի, այն ալ կառնեն։ Ա՛խ, գազաններ մինչեւ ե՞րբ այսպէս...։

Վշտակիր

Բուսչուր, 25 Յունիս

Հոգաբարձութիւնը աղջկանց վարժարանի նկուղը դրած էր պարկեշտ ատաղձագործի մը տրամադրութեան ներքեւ, որպէսզի արձակուրդի ատեն դպրոցական կոտրտած իրերը նորոգէ ձրիաբար, ինքն ալ իրեն համար ձրի աշխատի։ Արհեստաւորը Սապահ Գիւլեանի "պաշտպաններէն" չէր. այս պատճառաւ ալ Սապահ-Գիւլեան հակառակ էր անոր հոն աշխատելուն։

Մայիս 23ին ատաղձագործը տեսնալով որ աղջկանց վարժարանին մէջ քննութիւն չը կայ, կերթայ աշխատելու։ Քիչ յետոյ մեր բռնապետ տնօրէնը իր արբանեակ ուսուցիչներով միասին, կերթայ արհեստաւորին սպառնալիքով դուրս վռնտելու. և երբ ատաղձագործը օրինաւոր հարցումներով կուզէ պատճառը իմանալ, խեղոյն աչքին հարուած մը կստանայ և գետին կիյնայ։

Քաջն Սապահ-Գիւլ խեղճ մարդը տապալած տեսնալով, վրան կելլայ, քթին բերնին հարուածներ կը տեղացնէ և արիւն լուայ կընէ զանի։ Ատով ալ չի գոհանար մեծ մարդը. իր զոհին կոկորդէն կը բռնէ և կը սեղմէ. այդ միջոցին բարձրագոյն կարգի աշակերտները, տնտեսը և ուսուցիչները կը միջամտեն և հազիւ հազ կազատեն ատաղձագործը։

Ատաղձագործի աղիողորմ ձայնէն թաղեցիները ոտքի ելնելով՝ կը դիմեն ոստիկանութեան։ Բայց տնօրէնը արդէն կծիկը դրած էր։

Թաղի երեսփոխը իմանալով Սապահ-Գիւլեանին նոր դէպքը, կը բարկանայ, կայպանէ ըսելով. այս քանիերորդ անգամն է որ հայոց վարժարանի սրբէքթօրը հանդիպող խեղճին քիթ ու բերանը կը ջարդէ։ Որչա՜փ մեծ ամօ՜թ։ Հայերը ի՞նչու այս արարածը կը պահեն իրենց նուիրական յարկին տակ։ Խել մը այս տեսակ խօսքեր ընելով երեսփոխը ոստիկան կը ղրկէ դպրոց տնօրէնը ձերբակալելու. սակայն մեր ենիչէրի ազային դպրոցական քննութիւնները երեսի վրայ ձգած փախած էր։

Հոգաբարձութիւնը նոյն օրը այս դէպքը լսելով՝ կը կանչէ ատաղձագործը համոզելու որ դատարանի չը դիմէ։

Գանակոծուած արհեստաւորը միմիայն Պ. Ստեփան Մաթիանեանի խնդիրը յարգած ըլլալու համար կը համակերպի. որովհետեւ Պ. Ս. անկեղծ մէկն է և իր շրջապատողները անոր անկեղծութիւնը ի չարը գործածած են։

Այդ իրիկունը ամբողջ ժողովուրդը գրգռուած էր տնօրէնին դէմ։ Բացառութիւն կը կազմէին Տէր Կարապետը և Մկրտիչ քահանայ Կրճիկեանը, որը, փակագծի մէջ ըսենք, Շումլաէն վռնտուած է իբր ժանտախտ, և ասոնց նման կարճամիտներ, որոնք Սապահ-Գիւլի անիրաւութեանց ջերմ պաշտպաններն են։

Հետեւեալ առաւօտ, տնօրէնի վարժարան գացած միջոցին, անծանօթ մը գաւազանի քանի մը հարուածներ տալով տնօրէնի գլխուն՝ գետին կը տապալէ զանի և կանհետանայ։ Պ. Սապահ-Գիւլեան արիւն լուայ ըլլալով վայվայը կսկսի և կուլայ բարձրաձայն։

Բազմութիւնը կը խռնուի թաղին մէջ. մեր Կրճիկեան Տէր պապան բոլորովին գինով, պոռալով դուրս կը նետուի և կսկսի թաղը իրար խառնել։ Յանկարծ տէրտէրին աչքին կը զարնեն ատաղձագործին կինն ու զոքանչը, որոնք միւս ընտանիքներուն հետ դուրս էին ելած տէրտէրի պոռալուն պատճառով։

Անոնք տեսնելուն պէս տէրտէրը կսկսի Թուրքերէն անպատիւ հայհոյանքներ թափել ա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԻՒԱՃԱՆԸ

—

Աստղազարդ գիշեր է. լուսինը ուշացել։ Բայց ահա նրա երեւան գալու կէտում սկսեց սպիտակել. կամաց կամաց դուրս եկաւ երկնքի հարսը—իր ամբողջ գեղեցկութեան փայլով, սկսեց բարձրանալ դէպի վեր, դանդաղ, նազելով։ Նա ողջունեց Բոսֆորին, իր ճառագայթները ցրւեց խաղաղ ջրի երեսի վրայ. սկսեց խաղալ անհամարելի կերպով ծփացող կոհակների հետ։ Բայց այդ երկար չտեւեց. մի ճերմակ, արծաթազօծ ամպ որ անցից որ էր եկաւ. կտրեց լուսնի առաջը, ծածկեց նրա բաց դէմքը իբր մի քող, եւ յամառութեամբ լողաց նրա հետ։ Ամբողջ երկինքը կաթի մեղմ գոյնը ստացաւ։ Գեղեցիկ անուրջների գիշերը, սիրահար բանաստեղծի խանդը բորբոքող մեղկ խաղաղութիւնը, մռայլութիւն պարգեւող լռութիւնը ի մի խառնուած՝ գրկեցին Բոսֆորը եւ նրա շրջականները։ Այդ միջոցին արթուն մարդը, բնութեան այդ հրաշալի գեղեցկութիւնը իր վեհ խաղաղութեան մէջ դիտողը չէր կարող երեւակայել որ այսպիսի վայրկեաններում, աշխարհի վրայ գոնէ միքանի վարկեան մարդկային տանջանքները չէին դադարի։

* * *

Բոսֆորի զանված թաղերից մէկում. մի բարձր տան պատշգամբի վրայ նստած էր Գուրգէն էֆէնտին։ Նա աչքերը մխել էր ծովի մէջ, բայց չէր զմայլվում բնութեան գեղեցկութիւնով նոյնիսկ չէր նշմարում։ Երկար ժամերով նա նստած էր այդ տեղ, նոյն աթոռի վրայ. լուռ մունջ եւ քարացած։ Գուրգէն էֆէնտին տանջվում էր. բայց ինչո՞ւ. տանջվելու ինչ պատճառ ունէր։ Եթէ մէկը լսէր որ նա տանջվում է երբէք չէր հաւատալ։

Որովհետեւ Գուրգէնը Պոլսի ամենաերջանիկ երիտասարդն էր համարվում։ Բախտի այն պարգեւները, որոնք Պոլսի երիտասարդութեան մեծ մասի իտէալն են կազմում, դեռ շատ մատաղ հասակից վայելում էր Գուրգէնը։ Վաղուց բոլոր երիտասարդները նախանձում էին նրան՝ Պոլսի սալօնների այդ զարդին. ծերացած դրամատէրերի տափօտ կանանց եւ ժամանակից շուտ հասունացած աղջիկների կուռքին։

Բայց ի՞նչ էր Գուրգէնի տանջանքի պատճառը. արդեօ՞ք անյաջող սէրը։ Բայց նա սէրը չէր ըմբռնում. ամէն փափուկ ու տափօտ կին սիրելի էր նրան։ Դրամական նեղութի՞ւնը արդեօ՞ք. եւ ոչ այդ. որովհետեւ Գուրգէն էֆէնտին լաւ դրամ էր շահում։ Իր անձնական ձեռնարկութիւնների մէջ անյաջող լինե՞լը. եւ ոչ այդ. Գուրգէնը իր գործունէութեան ասպարիզում շատ յաջողակ, ընկերների մէջ եթէ ոչ առաջինը, գոնէ ամենաառաջիններից մէկն էր։

Էհ, հապա ի՞նչն էր պատճառը որ Գուրգէնը տանջվում էր. գուցէ բարկանալով հարցնես ընթերցող.

Այդ ես էլ չը գիտեմ. բայց համբերիր, գուցէ ինքը Գուրգէնը բանայ մեզ իր սիրտը։

* * *

Գուրգէնը երկար ժամեր այդպէս լուռ—մունջ նստելուց յետոյ վեր կացաւ մտաւ սենեակ, անցաւ չքեղ բիւրօի դիմացը, գրիչը վերցրեց եւ ուզեց գրել։ Այժմ կարելի էր տեսնել նրա դէմքը. նա կատարեալ հայկական դէմք ունէր, միայն քիթը այնքան մեծ չէր։ Աչքերը սեւ էին. յօնքերի տակից նայող այն աչքերից, որոնք երբէք չեն կարողանում ուղիղ նայել մարդու դէմքին. եւ նրանց մէջ չէ կարդացվում մարդկային հոգու եւ սրտի ամենաչնչին գաղանիքը։

նոնց գլխուն ։ Թուրք սրճարանի յաճախորդները դուրս կը թափին մտիկ ընելու մեր անարժան հովիւին հայհոյանքները և կայպանեն ղանի ։

Քիչ մը վերջը կառքով վրայ կը հասնի Տօքթէօռ Բաշեանը, նոյնպէս Տէր Կարապետը և իր պաշտած Օապահ-Գիւլեանին վիճակը տեսնալով կը պոռայ . «աչգ օլսուն Էէնիմահալլէնին գարըլարընա» . կանարգէ այն ընտանիքները, որոնց շնորհիւ 35—40 տարիներէ ի վեր հանգիստ ապրած է . . .

Վերջապէս տօքթէօռ Բաշեան զոց կառքով իր տունը կը տանի անօրէնը, ուր վէրքը կապուելէն ետքը Պ. Շիրինը բաբօրթ մը կը գրէ, որ բողոքագրով միասին դատարանին կը յանձնեն ։

Բոլոր անոնք ալ, որոնց անօրէնը ծեծած է . միացած ահագին բողոքագիր մը պիտի տան անօրէնին դէմ ։

Նոյն օրը Կրճիկեան քահանան բոլորովին գինով իրիկունը կը հանդիպի 64 տարեկան ամենէն սիրուած ծերունի Կարապետ Հաճի Գրիգորեան մարդուն և կը նախատէ ։

Այս չարաբաստիկ դէպքին պատճառաւ դպրոցի քննութիւնները ընդհատուած են ։

Ճշմարտախօս

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Բնիկ Կարնեցի, 35ամեայ, միջահասակ, արհեստն դերձակ (անունն եւ մականունը գրուած չէ մեզ) հինգ տարի առաջ Կ. Պոլիս պանդխտեալ եւ 1897 Յունիսէն ի վեր անհետացած ։

Բնիկ Բաղեշցի Ղարիպեան Գրոյեան, ամուսնութենէն վեց ամիս յետոյ հայրենիքէն մեկնած եւ անհետացած .

Զմշկածագի Կարմիր գիւղացի Յակոբ Մ. Ուզունեան, կարճահասակ, խաժակն, թխադէմ, հինգ վեց տարիէ ի վեր անհետացած ։

Վերոյիշեալ ազգայիններն բաւական տեղեր հետազօտեր են, սակայն իրենց վրայօք ոեւէ տեղեկութիւն մը առնուած չըլլալով եւ խորհելով որ թերեւս Պուլկարիոյ սահմաններն գտնուին, կը յանձնարարուի արգոյ ազգայնոց որ եթէ ասոնց վրայ տեղեկութիւն կամ լուր մը ունին, հաճին անյապաղ տեղեկագրել մեզ ի գիտութիւն իրենց ընտանեաց ։

Մնամք ազօթարար

Այցելու հովիւ հայոց Պուլկարիոյ

Բարթողիմէոս Վ. Պաղճեան

Փ. Պոլիս, 23 Յունիս

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ռուսական «Նովօյէ Վրեմիա» թերթը կը գրէ—Հայաստանի և Մակեդոնիոյ մէջ վիճակը գէշ է . և այդ ամէնը ի հարկէ լաւ յայտնի է պետութեանց, ասոնք իրաւունք ունին կարծելու թէ անհրաժեշտ և օգտակար բարենորոգումները յեղափոխական միջոցներով չէ կարելի ձեռք բերել, որոնք, ինչպէս յայտնի է, երբեք հաստատուն կարգ մը չեն ստեղծած ։ Պետութիւններու՝ դէպի Օսմանեան կայսրութեան մէջ տեղի ունեցած խռովութիւններ անտարբեր չըլլալուն ապացոյցներէն մէկն ալ կարող է համարուիլ այն, որ մեր դեսպան Զինովիեվին առաջարկուած է միանալ Աւստրիոյ դեսպանի ըրած դիմումներուն վերջերս Թիւրք Սերպիական սահմանին վրայ տեղի ունեցած անցքերուն պատճառաւ ։

— Նոյն թերթը մանրամասնոյց կընէ և «Պերլինէր Թակպլաթ»ին Պոլսէն եկած հետեւեալ հեռագիրը .

«Զը նայելով որ Բարձր. Դուռը շարունակ կը հերքէ Հայկական նահանգներէն եկած յուզիչ տեղեկութիւնները և բուն իսկ մայրաքաղաքին մէջ եղած հայ տարրին դժգոհութեան փաստերը, այսու ամենայնիւ այդ բոլոր տեղեկութիւնները ճիշդ են ։

Թէ պալատին և թէ Բ. Դրան մէջ միշտ խորհրդակցութիւններ տեղի կունենան, որոնց, բացի պաշտօնական անձերէ, կը մասնակցին և անոնք, որոնց յայտնի է ինչ որ գաղտնագողի կը գործուի ։

Պարզ է որ օտար պետութիւններն ալ ուշք կը դարձնեն Հայկական դժգոհութիւններու վրայ ։ Օրինակի համար կը հաստատեն թէ Ռուսիա մեծ ճիգեր կը թափէ լուծել Կովկաս ապաստանած գաղթականներուն հարցը ։ Ռուսիա կառաջարկէ զանոնք գաղթեցնել Կրէտէ կղզին, Թուրք կառավարութեան հաշւոյն .

Որքան պալատին մէջ երկար սատանին այդ խնդրին լուծմանը վրայ, այնքան դժուար պիտի ըլլայ վերջ դնել հայկական գրգռումներուն» ։

— Գերմանական նոյն թերթը հետեւեալ նոր մանրամասնութիւնները կը հաղորդէ . Հայերը Կրէտէ գաղթեցնելու ռուսական ծրագրի մասին—Ռուսիայի բանակցութիւնները Թուրքիոյ հետ այդ խնդրոյն մասին, մինչեւ հիմա լոկ Թուրքիաի կարծիքն իմանալու բնաւորութիւնը ունէին ։ Կը կարծուի թէ միմիայն Անգլիան լուրջ կերպով պիտի բողոքէ . որովհետեւ Ռուս-Թրքական սահմանագլխին վրայ եղած անընդհատ երկպառակութիւնները իրեն համար օգտակար են ։ Ելդըզին մէջ այս ծրագիրը իրագործելու միջոցին և ժամանակին յարմարութեանը մասին տարբեր հայեացքներ կան . բայց Հայոց Պատրիարք Օրմանեան կը թուի թէ համաձայն է ։

— Ռուսիա ապաստանած քառասուն հազար հայերը Կրէտէ ղրկելու միտքը լաւ ընդունելութիւն գտած է թէ Աթէնքի և թէ Գանիայի մէջ ։ Որովհետեւ Թուրքերու կղզիէն հեռանալուն պատճառաւ երկրագործներու մեծ կարիքը կզգացուի ։

— Առաջ ալ Կրէտէ հայ գաղութ կար . որոնց հետքերը իններորդ դարէն մինչեւ այսօր մնացած են ։ Այս հետքերը անցեալի յարութիւն առած յիշատակներն են, մի քանի Կրէտական գիւղերու անունները՝ Արմէնի, Արմէնիանա և այլն ։

Ահա այս է մնացած Կրէտէի նախկին հայ գաղութէն, որ հիմնուած էր Նիկիֆօր կայսեր կղզին արաբներու ձեռքէն խլած միջոցին ։

Ինչպէս այսօր, իններորդ դարուն մէջ ալ Կրէտէն աշխատող բազուկներու պէտքը ունէր ։ Եւ Բիւզանդիոնի կառավարութիւնը մտածեց քանի մը հազար հայ ղրկել հոն ։

Եւ ո՞ւր են այն գաղութները այսօր, կը հարցնէ «Թան», և կը պատասխանէ . այնքան համակերպեցան տեղացիներուն, որ մինչեւ մեր օրերը՝ բացի քանի մը գիւղի անուններէ ուրիշ հետք մը չը թողուցին ։

Անշուշտ նոյնը պիտի պատահի նոր գաղթող 40—50,000 հայերուն հետ ։

— Վիէննայէն կը հաղորդեն «Տէյլի Թէլէկրաֆ»ին . Քիւրտերը հայկական հինգ գիւղեր աւերեր են, յափշտակելով ամէն բան ինչ որ արժէք ունի ։ Առեւանգուած են քսան կին և սպաննած 150 այրեր ։ Աւերուած գիւղերի այն բնակիչները, որոնք կրցած են կեանքերնին փրկել, մնացած են առանց ապաստանի, և բոլորովին զուրկ ապրուստի միջոցներէ ։

— Պերլինէն բարեգործական հաստատութեան մը ձեռքով 2,557 ֆր. նպաստ ղրկուեր է 8 կարօտելոց համար ։

— Ի նպաստ կարօտելոց պատրիարքարան հասեր են Վիւրթէմպէրկէ 200 ֆր. և Ֆրէզնօ է 43 անգլ. ոսկի ։

— Պոլսոյ «Մաղիկ» շաբաթաթերթը արտօնութիւն ստացեր է

Գուրգէնը գրել չը կարողացաւ . Նա բարկութեամբ մի կողմ նետեց գրիչը տեղից վեր ցատկեց եւ սկսեց հրջագայել բաւական չքեղ կահաւորված սենեակի մէջ .

— Բայց աս ի՞նչ է Աստուած իմ . գիշերուայ ժամի երկուսն է եւ ես չեմ կրնար քնանալ . աչքերս գոցուելու բոլորովին տրամադիր չեն ։

Պատի գեղեցիկ ժամացոյցը բաւական ազդու կերպով հնչեցրեց երկու ժամը ։

Գուրգէնը ցնցվեց . կարծես օձի խայթը զգալով մի կողմ ընկաւ եւ հառաչելով մրմնջաց .

— Արդէն ժամը երկուսն է, եւ ես դեռ չեմ քնացած ։ Ինչո՞ւ այս պէս . այս ինչ տանջանք է, այն էլ ամէն գիշեր շարունակ ։

— Եւ երբեք չը պէտք է քնանաս . շարունակ պէտք է տանջուես . գփիւռի նման Գուրգէնի ականջի կողքովը սուրալով անցաւ մի շշուկ ։

Գուրգէնը տեղն ու տեղը մնաց քարացած . գլխի մազերը ցցվեցին, մարմինը սարսռեց, ճակատը ծածկվեց սառը քրտինքի խոշոր կաթիլներով ։ Բաւական երկար նա այդ դրութեան մէջ մնաց . վերջապէս, իր բոլոր ուժերը լարելով գնաց ընկաւ բազկաթոռի վրա եւ մրմռքված ձայնով շշնջաց .

— Բայց, Աստուած իմ, ո՞վ կայ հոս, սենեակիս մէջ . ձայնը ո՞րունն էր ։ Մի՞թէ անճնցմե մին հոս է . . . . Մի՞թէ արդէն ամէն բան գիտեն . մի՞թէ ալ ժամանակը հասած է . . . . . Ոչ . ոչ . մարդ չկրնար ըլլալ ։ Չեն կրնար գիտնալ . ոչ ոք կը կասկածի, ամենքն ալ նոյն սիրով կը վարուին հետս . ինչպէս առաջ ։ Ամենքին ալ վստահութիւնը կը վայելեմ ։ Ո՛չ, ոչ . մարդ չգիտեր . ինքնիրենս կը տանջուիմ ։ Ինչո՞ւ համար . ի՞նչ ըրած եմ . իմ տեղս ով ըլլար որ նոյնը չընէր . . .

— Սուս, ամօթ է, խղճահարուիր . մի ջանար արդարանալ ։ Այո . ճիշդ է, ոչ ոք կար հոն . բայց ես կայի, հոն էի . տեսայ . լսեցի ամէն բան ։

Գուրգէնը շուարեց . գոյնը բոլորովին մեռելի գոյն դարձաւ եւ սկսեց դժուարութեամբ շնչել կարծես մէկը կոկորդից բռնած ամուր սեղմում էր ։

— Բայց ո՞վ ես դուն, ոգի, հրեշտակ, թէ սատանայ ։ Ինչո՞ւ չես երեւնար . ինչո՞ւ ամէն գիշեր գլխ կը տանջես ։ Ի՞նչ կրնայի ընել . կեանքս վտանգի մէջ էր . կը տանջուէի . գլխս պիտի մեռցնէին ։ Մեղքեցայ երիտասարդութեանս . չը կրցի դիմանալ ։ Կեանքը կը սիրեմ . թոյլ ծնած ըլլալուս համար մի՞թէ ես մեղաւոր եմ ։

— Ոչ, Գուրգէն, սխալ հաշիւ էր քու հաշիւդ ։ Դեռ կը հարցնես թէ ի՞նչ ըրիր . չես գիտե՞ր ։ Դաւաճանեցիր հայրենիքիդ, ընկերներուդ, հանրութեան գործին ։ Կեանքդ փրկել ուզեցիր Թուրքին ձեռքէն հա ։ Առանց մտածելու որ թուրքէն աւելի զօրեղ թշնամի մը շահեցար, ընկերներուդ ատելութիւնը եւ ամենէն սարսափելին—իմս ։

— Բայց դուն ո՞վ ես, ըսէ, կաղաչեմ, կը պաղատիմ ։

— Մի ուզեր հասկանալ թէ ես ով եմ . գիս չես կրնար տեսնալ ։ Քեզմէն ի՞նչ կուզեմ, կը հարցնես . ոչինչ . տանջանքներդ, օձի պէս գալարումդ ։

— Բայց մինչեւ ե՞րբ, անգո՛ւթ ։

— Մինչեւ վերջին շունչդ . երբ դու գոյութենէդ զազրիս, ես ալ կը զազրիմ դքեզ տանջելէ . ես քու մէջդ, քու հոգուդ էն հեռու՝ անկիւններուն մէջ կապրիմ ։ Իմ անունս է խիղճ . . .

Գուրգէն կայծակնահարի պէս գետին փռվեց . Նա ուշաթափ եղաւ ։

Արծաթազօծ ամպից ազատված լուսնի պայծառ ճառագայթների խուրձը ընկաւ ուշաթափ դաւաճանի վրա եւ լուսաւորեց նրա կծկված ու զզուելի դէմքը . . . ։

ՎԱՐԴՕ

——)·(——

եղեր օրաթերթ հրատարակելու։

— Եօղղատի մէջ նպաստամատոյց յանձնախումբ մը կազմուեր է սովելոց համար. և առաջին արդիւնք 15 ոսկի պատրիարքարան ղրկած են։

— Վեհ. Հայրապետը մասնաւոր նամակներով խնդրեր է Պոլսոյ Պատրիարքարանէն, որպէս զի Սսոյ եկեղեցիին, վանքին և կղերին պէտքերը հոգացուին, և հոգեւոր դպրոց մը բացուի հոն, ինչպէս կայ Արմաշ։ Եթէ պէտք եղած կարգն ու կանոնը հաստատուի, ինք յանձն կառնու վերաբանալ Շահնազարեան վարժարանը, հարկ եղած տարեկան նպաստը վճարելով։

— Բալուի Քաղցրահայեաց նշանաւոր մենաստանը՝ որ Հայկական տարափներու առեն աւերուած էր, պատրիարքարան ղրկուած նպաստներով վերանորոգուեր է և որբանոցի վերածուեր։

— Վանի պատրիարքական տեղապահ Ներսէս եպս. իր ընդունած նպաստներով յաջողեր է բաւական պարտկել տիրող թշուառութիւնը. իրեն նպատակ դրած ըլլալով միմիայն աղքատներուն օգնել։ Այս բան սակայն կարգ մը ձրիակերներու, կեղծ աղքատներու գործին չէ եկեր. և շատերը կրօնափոխ ըլլալու սպառնալիքով նպաստ կը պահանջեն եղեր։

ՎԱՌՆԱՅԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ԲՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ներկայ եմ եղած տեղւոյս ազգային և հայկական կրթարաններու գրեթէ բոլոր կարեւոր դասերու հարցաքննութեանց, որոնցմով կարելի է ճանաչել աշակերտներու մտաւորական կարողութիւնը։ Ստացուած տպաւորութիւնը շատ լաւ է։ Մանաւանդ անուրանալի է աշակերտներուն կրած փոփոխութիւնը։ Ամենէն շատ իմ աչքիս զարկաւ և ուշադրութիւն գրաւեց աշակերտներուն համակրելի և ազատ վարմունքը դէպի իրենց ուսուցիչները, որոնք ջանք չեն խնայած իրենց յանձնուած մանուկներուն սորվեցնել այն, ինչ որ անոնց պէտք է։

Մենք կը շնորհաւորենք զիրենք, և կը մաղթենք որ անոնք նորէն չը խնայեն իրենց փութաջան աշխատութիւնը ապագայ սերունդը պատրաստելու և զանոնք առաջնորդելու դէպի իսկական զարգացումը, որով միայն նուիրագործած պիտի ըլլան իրենց սուրբ նպատակը։ (*)

Ֆեպիս

Վառնա, 29 Յունիս

——).(——

(*) Այս նամակը մենք կը հրատարակենք, որովհետեւ գրողը տեղացի երիտասարդ մըն է, որ անշուշտ աւելի լաւ կարող է յիշել իրենց նախկին դպրոցական վիճակը։

Ծ. Խ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մակեդոնական բարձրագոյն կոմիտէի օրգան «Ռէֆորմ»ի լրագիրը նկարագրելով Կովկաս ապաստանած հայ գաղթականների վիճակը այսպէս կը վերջացնէ.

«Լաւ նայինք այդ դժբաղդ, տանջանքներով մեզի բախտակից ժողովրդին վիճակին վրայ։ Նոյն դժբաղդութիւնները մեզի ալ կսպասեն։ Մենք ալ անոնց նման պիտի թափառինք ու ամէն տեղէ հալածուինք անօթի ծարաւ. եթէ ազատութեան սէրը զմեզ չը միացնէ կռիւ մղելու ընդհանուր թշնամւոյն դէմ։ Կռիւ, որուն համար չը պիտի խնայենք նիւթական ամէն զոհողութիւն, նոյն իսկ և կեանք։

— Նոյն լրագիրը «Մակեդոնիան արտասահմանի մէջ» վերնագրով յօդուածին մէջ կրսէ.

«Երիտասարդ Թուրքերը մտածելով Թուրքիան ազատել վերջնական քայքայումէ, կը դիմեն «պալիատիւ» միջոցներու. անոնք կուզեն այնպիսի բարենորոգումներ, որոնք պիտի ծառայեն Թուրքիան պահպանելու համար։ Անոնք կատաղի ազգասէրներ են և իրենց Թուլութեան մէջ չեն գիտեր զով մեղադրեն։

Մեր կռուին մէջ մենք չենք կրնար անոնց վստահիլ։ Անոնք կուզեն Թուրքիոյ ամբողջութիւնը պահել. իսկ մենք կուզենք որ ամէն մէկ նահանդ անկախ ըլլայ։

Քանի մը պուլկարներ մեզ կը հարցնեն. թէ ինչո՞ւ անոնց հետ չենք միանար։

Մենք երիտասարդ Թուրքերուն լաւ կողմերը պարզեցինք, իրականութեանը հաւատարիմ ըլլալու համար. պէտք էր որ բանայինք և այն ազատութիւնները և ցածութիւնները, որ թագնուած են անոնց դրօշակին տակ. բայց այդ չէ մեր թերթին նպատակը։

— Ս. Բեդերսպուրկէն Կոպէնհակէն ղրկուած հեռագիր մը կը հաղորդէ.

Պատգամաւորութիւն մը՝ կազմուած Ֆրանսիոյ ծերակոյտի անդամ Թրարիօէն և Անգլիոյ Իտալիոյ, Հունգարիոյ, Նորվէկիոյ Շվետայի և Տանիմարքայի համալսարաններու 7 ուսուցչապետներէն ուղեց ուղերձ մը ներկայացնել՝ Զարին յօդուտ Ֆինլանտական խնդրոյն, բայց մերժուեցաւ։

— Մակեդոնական բարձրագոյն կոմիտէին հին անդամները փոխուած են իրենց աննպատակ և թոյլ գործունէութեան պատճառաւ։

Նոր ընտրուած անդամները բոլորն ալ զուտ յեղափոխականներ են և. յայտնի անցեալով։

Նոր ընտրուած կոմիտէի ժամանակ պաշտօնապէս դրուեցաւ Հ. Յ. Դաշնակցութեան և Մակեդոնական յեղափոխական կազմակերպութեան համերաշխաբար գործելու հիմը։

Բանաստեղծական «Անահիտի» գովաբանած մակեդոնացիները աւելի լաւ գնահատեցին Անահիտէն բանաստեղծօրէն դատափետուած հայ յեղափոխական կազմակերպութիւնը։

Աշխարհի օրէնքն է. այն որ մերը չէ. հաճելի է և գնահատելի։ Մանաւանդ իմաստակ քննադատներուն համար։

— Պելճիքա, այս փոքրիկ, երկաթուղիներու ցանցով պատած, գործարաններով և գործաւորներով լի երկրին մէջ ահագին խլրտումներ կան։

Ֆրանսայի ծահմանակից, աւելոր ազատական գաղափարներով միշտ ոգեւորուած, կեանքի շատ պայմաններով նման, շարունակ հեռաքրքրելի է եղած Ֆրանսայի համար։ Այնպէս որ մեծ հասարակապետութեան և այս փոքրիկ ու եռանդուն կեանք ունեցող երկրին մէջ տեղի ունեցող հասարակական գոյնով բոլոր խլրտումները փոխադարձաբար կաղդեն միմեանց վրայ։

Պելճիքայի խլրտումները ընտրողական օրէնքներու մասին է։ Պելճիքա ձանցրացած է նոյն իսկ իր սահմանադրական օրէնքներով կաշկանդուած թագաւորէն, ռամկավարական հասարակապետութիւն կուզէ։ Ֆրանսա կուրախանայ, Գերմանիա կը կատղի։

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

ՎԱՌՆԱ, Պ. Ժիրայր Տ. — Մենք այդ անունով մարդ չենք ճանչնար Վառնայի մէջ. եթէ կարելի է անձամբ ներկայացէք խմբագրատուն։

ՍՕՖԻԱ, Պ. Ս. — Ի՞նչ եղաւ. արդեօք մեր մատնագոյց ըրած պարոնը գտաք։ Եթէ չը վճարէ ստիպուած ենք անունը յայտնելու։

ՊՕՐՍԱ

Վառնա 30 Յունիս

ՊՈՒՂՏԱՑ

Վակօն,	լիպրա 55—58,	հէքթօլ. 10—12.75 ֆրանք
Արապա,	լիպրա 55—60	հէքթօլ. 12—13.50 ֆրանք

ԱՐԲԱ

Լիպրա	42—50	հէքթօլ. 7—7.10 ֆրանք

ՄԻՍԻՐ

Վակօն,	55—57 լիպրա,	6.10—6.20
Առապա,	55—60 լիպրա,	6 40—6.50

Կիւնէէ 10—12 վակօն, 8—10 առապա կէլմէքսէ տիր։

Առապա մուամէլէսի՝ Նաբոլէոն 21 ֆրանք հիսապը իլէ տիր.

——).(——

ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ
Քամառ-Քաթիպան
Գրեց ԲԱԲԱ-ԳԱՍՊԱՐ։

Պուլկարիոյ մէջ գինը 50 սանթիմ, իսկ արտասահմանի համար 60 սանթիմ։

Ցանկացողները թող դիմեն Շարժումի խմբագրութեան։

„ԲԱՆԱՄԷՐ“

Հանդէս Հնախօսական, Պատմական, Լեզուաբանական եւ Քննական։

Տնօրինութեամբ Պ. Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆԻ.

Տարեկան 20 ֆրանք ամէն տեղ 4 գրքի համար, իսկ մէկ գիրքը, 100 էջով, 6 ֆրանք։

Հասցէ՝
M. Basmadjian
112, B-d. Rochechouart, 112
Paris

„ՀԱՅՐԵՆԻՔ“

Ազգային չաբաթաթերթ, տարեկան մէկուկէս տոլար, իսկ արտասահմանի համար 10 ֆրանք։

Հասցէն՝ Խմբ. Հայրենիքի
628 Third Avenue
New York City
(U. S. V.

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ „ՇԱՐԺՈՒՄ“ի

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեւտոմս, հասցէտոմս, նամակագլուխ, հարսանեկան հրաւիրագիր, մահագդ, ինչպէս նաև պրոշիւռներ։

Գիները յոյժ դիւրամատչելի։

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին։

ՑԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԻԿ

ՎԱՐԴՕ

ԵՐԿՈՒ ՍԷՐ
(ՀԱՅ ՑԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ)

)(Գին 1 Ֆրանգ)(

Մնացած սակաւաթիւ օրինակները կը ծախուին Վառնայի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպէ՝ Տ. Անտոն Կոչի մօտ, Ռուսչուք՝ Հայկ Մալախեանի սրճարանը։

ԿՈՒԶԷՈՔ ՀԱՐՕՏԱՆԱԼ

Դիմեցէ՛ք

Մ. Թիւթիւնճեան եւ ընկ.

ի Ռուսճուք

Ուր ըստ առաջնոյն կը վաճառեն, Սոֆիա քաղաքի՝ Պուլկարական կառավարութեան կողմէ վաւերացած վիճակահանութեան Բ. չրջանի տոմսակները։

Օտար երկիրներէ յանձնարարութիւններ եւս կընդունուին։

Отговорникъ: А. СУКЯСОВЪ

Печати да „Взаимность“ Варна.